ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ՊԵԿ-ՀՄԱԱՊՁԲ-2025/1

ք.Երևան « » ---------- 2025թ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի, որը գործում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ «Գնորդ»), մի կողմից, և «ՀԱՅՏԵՔ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Պետրոսյանի, որը գործում է «ՀԱՅՏԵՔ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, (այսուհետ «Վաճառող»), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար։

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի։

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը։

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով։

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը։

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Ընել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 4380000 (չորս միլիոն երեք հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Վաճառողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում գնորդը վճարումներն իրականացնելիս ապահովի վաճառողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում գնորդը պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է գնորդի կողմից բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	«ՀԱՅՏԵՔ» ՍՊԸ
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7	ք.Երևան, Արաբկիր, Երզնկյան 1 13
ՀՎՀՀ 02647057	ՀՎՀՀ 00170201
Հ/Հ 900011013902	Հ/Հ 2052222097641001
ՀՀ ՖՆ աշխատակազմի	Ինեկոբանկ ՓԲԸ
գործառնական վարչություն	Տնօրեն՝
Գլխավոր քարտուղար	
Է. Գևորգյան _____	**Ա. Պետրոսյան** _____
/ստորագրություն/ Կ.Տ/	/ստորագրություն/ Կ.Տ/

Digitally signed by PETROSYAN ASHOT 1710690119
Date: 2025.05.08 11:16:31 AMT

Digitally signed by GEVORGYAN EDGAR 4010690054
Date: 2025.05.12 09:41:59 AMT

Հավելված N 1
« » ---------- 2024թ. կնքված
ՀՀ ՊԵԿ-ՀՄԱՊՁԲ-2025/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի*										
Չ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը ՀՀ դրամ	ընդհանուր գինը ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
								Հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	34721490/1	Անօդաչու թռչող սարք	Կվադրոկոպտեր DJI Mavic 3 Pro (DJI RC) Model Mavic 3 Pro (DJI RC) Մարտկոցի լիցքավորման ժամանակը մոտ. 96 րոպե մոտ. DJI 100W USB-C սնուցման ադապտեր և DJI Mavic 3 Series 100W մարտկոցի լիցքավորման հանգույց: Լիցքավորման ջերմաստիճանի միջակայքը 5°-ից մինչև 40°C Տարողությունը 5000 mAh Max. լիցքավորման հզորություն 17,6 Վ Քաշը 335,5 գ: Լարում 15,4 Վ Տեսակ Լիթիում-իոն 4S Էներգիա 77 Վտժ Մարտկոցի լիցքավորման հանգույց Մուտքը USB-C՝ 5-20 Վ, մաքս. 5 A Ելքի մարտկոցի միացք՝ 12-17,6 Վ մաքս. 5 A Ընդհանուր գնահատված հզորությունը Մարտկոցի լիցքավորման հանգույց՝ 65 Վտ Մարտկոցի լիցքավորման հանգույց (100 Վտ). Տեսահաղորդման ալեհավաքներ 4 ալեհավաք, 2T4R Փոխանցման ուշացում՝ 130 մս (DJI RC-N1 հեռակառավարիչով) 120 մս (DJI RC-N1 հեռակառավարիչով) 120 վտ (DJI RC-3 մս շարժական սարքի հետ (DJI RC Pro-ի վրա գործող միջավայրով) Իրական ժամանակում դիտման որակի հեռակառավարում. 1080p/30fps, 1080p/60fps	հատ	1500000	1500000	1	ՀՀ ՊԵԿ ք. Երևան, Մ. Խորենացի 7	1	Ապրանքի մատակարարումն իրականացվում է պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում:

			Max. փոխանցման հեռավորությունը (անխոչընդոտ, առանց միջամտության) FCC՝ 15 կմ CE՝ 8 կմ SRRC՝ 8 կմ MIC՝ 8 կմ Max. փոխանցման հեռավորությունը (անխոչընդոտ, միջամտությամբ) Ուժեղ միջամտություն՝ քաղաքային տեսարան, մոտ. 1,5-3 կմ Միջին միջամտություն՝ ծայրամասային լանդշաֆտ, մոտ. 3–9 կմ Ցածր միջամտություն՝ ծայրամասային/ափնյա, մոտ. 9–15 կմ. Մաքս. փոխանցման հեռավորությունը (խոչընդոտներով, միջամտությամբ) Ցածր միջամտություն և խոչընդոտներ շենքերից՝ մոտ. 0–0,5 կմ Ցածր միջամտություն և ծառերի խոչընդոտներ՝ մոտ. 0,5–3 կմ.							
2	31211240/1	Բաշխիչ սարքեր	Տեսախցիկ ISO Նորմալ և Դանդաղ .265) MOV (Apple ProRes 422 HQ/422/422 LT) Max. տեսանյութի բիթային արագություն H.264/H.265՝ 200 Մբիթ/վ Apple e 5585 Աջակցվող հաճախականությունների բնութագրերը՝ 4G/3G/EDGE/GSM՝ 800/900/1800/2100/2300/2600 ՄՀց; LTE TDD/FDD՝ 2100/2300/2600 ՄՀց; FDD մուտքային արագությունը 300 Մբիթ/վ է, ելքային 50 Մբիթ/վրկ, TDD 150 և 50 համապատասխանաբար; աշխատել միկրո SIM քարտերով; wi fi 2.4 և 5 գ Հց; MIMO տեխնոլոգիայի աջակցություն; LAN 100 Մբիթ/վ - 1 հատ; NFC աջակցություն; Մարտկոցի հզորությունը 6400 mAh, կարող է օգտագործվել որպես powerbank; չափերը 111 x 70 x 22 մմ; քաշը 200 գր. Եզրակացություն. Համատեղելի է միայն SIM քարտերի հետ, որոնք նախատեսված են երթուղիչների և USB մոդեմների հետ աշխատելու համար: Համառոտ բնութագրեր. Ցանցի արտադրություն՝ 2գ, 3գ, 4գ Գործառնական հաճախականությունների միջակայքերը՝ 800, 900, 1800, 2100, 2600 Ներկառուցված Wi-		280000	840000	3		3	

			Fi՝ այո Բջջային սակագներին հարմարվելու հնարավորություն՝ ոչ 2.4 ԳՀց տիրույթներ, 5 ԳՀց LAN կապակցման համարներ rj11. չկա Արտաքին ալեհավաքների միացում 2g/3g/4g: այո Աջակցում է 3g/4g USB մոդեմներին. Ոչ Աջակցվող կատեգորիա՝ cat.6 Մարտկոցի հզորությունը՝ ավելի քան 4000 mAh							
3	31682140/1	Վերահսկման և ղեկավարման սարքեր	Ձպս տրանսպորտային միջոցների և տարբեր բեռների գտնվելու վայրին հետևելու համար կոմպակտ GPS թրեյքեր է: Սարքը համալրված է ներկառուցված մարտկոցով, որն ունի 10000 մԱ/ժ հզորություն և ապահովում է մինչև 120 օր թրեքերի աշխատանքը էներգախնայողության ռեժիմում: Տեղադրության մասին տեղեկությունները հեռախոսին փոխանցվում են SMS հաղորդագրությունների միջոցով՝ Google Քարտեզների հղումով: Բացի այդ, կա Android-ի և iOS-ի կամ համակարգչի համար նախատեսված բջջային հավելվածի միջոցով իրական ժամանակում սարքի կոորդինատներին հետևելու հնարավորություն: Բացի այդ, սարքը հագեցած է ներկառուցված խոսափողով, որը թույլ է տալիս լսել իրավիճակը դիտարկման օբյեկտի մոտ: Անջրանցիկ պատյանը՝ պատրաստված բարձր ամրության պլաստիկից՝ IP65 պաշտպանության վարկանիշով, հուսալիորեն պաշտպանում է սարքը պատյանի ներսում ներթափանցող խոնավությունից և փոշուց: ԵՌԱԿԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ Սարքը աջակցում է GPS և LBS դիրքորոշման համակարգերին: Դրա շնորհիվ կոորդինատների որոշման ճշգրտությունը կազմում է ընդամենը 5 մետր: Բացի այդ, թրեքերը օգտագործում է AGPS տեխնոլոգիա, որը թույլ է տալիս որոշել կոորդինատները այն տարածքներում, որտեղ կապ չկա արբանյակների հետ, օրինակ՝ թունելներում: 3G ՄՈԴՈՒԼ Սարքը հագեցած է SIM քարտի		40000	400000	10		10	

			բնիկով և 3G մոդուլով: Դրա շնորհիվ թրեկերը կարողանում է իրական ժամանակում տեղեկատվություն փոխանցել իր գտնվելու վայրի մասին: ՕՆԼԱՅՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ Մոնիտորինգի գործառույթն օգտագործելիս փարոսը շարունակաբար հետևում է վերահսկվող օբյեկտի շարժումներին և տեղեկատվությունը GPRS տեխնոլոգիայի միջոցով փոխանցում մոնիտորինգի սերվերին: Դրա շնորհիվ դուք կարող եք իրական ժամանակում վերահսկել օբյեկտի բոլոր շարժումները ձեր սմարթֆոնից կամ համակարգչից: ՆԵՐԿՐԱՑՎԱԾ ՄԱՐՏԿՈՑ 10000 mAh Թրեքերը հագեցած է ներկառուցված 10000 mAh մարտկոցով, որն ապահովում է մինչև 120 օր թրեքերի աշխատանքը էներգախնայողության ռեժիմում: ԱԶԳԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Հետագծողն աջակցում է աշխարհապաշտպանության սահմանները սահմանելու գործառույթին: Եթե սարքը հատի նշված սահմանը, ահազանգի մասին ծանուցում կուղարկվի ձեր հեռախոսին: ՄԻԿՐՈՖՈՆ Ներկառուցված խոսափողը թույլ կտա լսել դիտարկման օբյեկտի շուրջ ստեղծված իրավիճակը: Պարզապես ուղարկեք SMS առաջարկվող հրամանով, և սարքն ավտոմատ կերպով կզանգահարի նշված համարին: ՀԱՅՏՈՒՄ ANDROID-ի և IOS-ի համար Դուք կարող եք շփվել սարքի հետ՝ օգտագործելով SinoTrack բջջային հավելվածը Android-ի և iOS-ի համար: Հավելվածը թույլ է տալիս հարմարավետորեն կարգավորել թրեկերը, ինչպես նաև իրական ժամանակում հետևել դիտարկման օբյեկտի գտնվելու վայրը: ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԱՄՐՈՑՈՒՄ Սարքի ներքևի կափարիչի մեջ ներկառուցված են 6 մագնիսներ: Սա թույլ կտա ձեզ ապահով կերպով ամրացնել թրեքերը մետաղական մակերեսին, ներառյալ մեքենայի հատակին							

			կամ կոնտեյների կողքին:							
4	32321180/1	Տեսասարքեր-1	Տեխնիկական բնութագրեր Մոդելի անվանումըDR970X-2CH Plus Channel 2CH ընդգծված 4K UHD (առջևի) + Full HD (հետևի), 2,4-5 ԳՀց Wi-Fi, Cloud, Արտաքին LTE մոդուլ (ըստ ցանկության) Ապրանքի չափերը՝ Սև / 118,6 մմ (L) 3 x 5/1. 67,3 մմ (L) x 28 մմ (Վ) x 25 մմ (Հ) / 25 գ Հետևի տեսախցիկի միացում Coaxial մալուխ Հիշողության աջակցում microSD քարտ մինչև 512 ԳԲ Ձայնագրման ռեժիմներ Նորմալ ձայնագրում, իրադարձությունների ձայնագրում (երբ հարվածը հայտնաբերվում է նորմալ և կայանման ռեժիմում), ձեռքով ձայնագրում և կայանման ձայնագրում (երբ հայտնաբերվում է): *Hardwiring Power Cable-ն օգտագործելիս ACC+-ը կգործարկի կայանման ռեժիմը: Այլ մեթոդներ օգտագործելիս G-ցուցիչը կգործարկի կայանման ռեժիմը: Կայանման ռեժիմ ԱՅՈ (ներառված է լարերի միացման մալուխ) Կայանման ռեժիմ Իրադարձությունների ձայնային ծանուցումներ ԱՅՈ Պատկերման ցուցիչ Առջևում՝ STARVIS 2 CMOS սենսոր (մոտ 8,4 Մ Պիքսել) Հետևի մասում՝ STARVISTM CMOS ցուցիչ (մոտ 2,1 մ պիքսել) Դիտման անկյուն 4,25 անկյունագծային անկյունագիծ al 131°, Հորիզոնական 107°, Ուղղահայաց 55° լուծաչափի կադրերի արագություն առջևում՝ 4K (3840 x 2160) @ 30 fps Հետևում՝ Full HD (1920 x 1080) @ 30 fps * Կադրերի արագությունը կարող է տարբեր լինել Wi-Fi հոսքի ժամանակ: Տեսանյութի կոդեկ H.265 (HEVC) / H.264 (AVC) Պատկերի որակ և բիթային արագություն Առջևի/հետևի ամենաբարձր (ծայրահեղ). Անվճար ձևաչափ՝ ԱՅՈ (հարմարվողական) Իրադարձությունների ֆայլի վերագրանցման պաշտպանություն ԱՅՈ (մինչև 50) SD քարտի ձախողման մասին ծանուցում ԱՅՈ Պլանավորված		280000	840000	3		3	

			վերաբեռնում ԱՅՈ Վիդեո ֆայլի ընդլայնում Ներկառուցված MP4 Wi-Fi (802.11 a.b.g.n.ac) Տեխնիկական պայմաններ՝ ամպային կապի տիրույթում (GPS) ker Ներկառուցված հարվածային ցուցիչ 3 առանցք արագացման սենսոր LED ցուցիչներ Առջևում՝ ձայնագրման LED, GPS LED, B/W/L (Bluetooth/Wi-Fi/LTE) LED, Առջևի անվտանգության լուսադիոդ Հետևի: Հետևի անվտանգության LED կոճակի ձևաչափի կոճակ. Սեղմեք և պահեք ձևաչափի կոճակը 5 վայրկյան, և ձայնային ազդանշանից հետո բաց թողեք կոճակը: Այնուհետև կրկին սեղմեք և պահեք 5 վայրկյան և ձայնային ազդանշանից հետո բաց թողեք կոճակը՝ microSD քարտը ձևաչափելու համար: Հպման ցուցիչ. սեղմելով հպման սենսորը, ձեռքով ձայնագրություն է սկսվում՝ կախված որոնվածի կարգավորումներից: Աշխատանքային ջերմաստիճանը -20 °C – 70 °C (-4 °F – 158 °F) Պահպանման ջերմաստիճանը -20 °C – 80 °C (-4 °F – 176 °F) Բարձր ջերմաստիճանի անջատում Մոտ. 75 °C (167 °F) Պահուստային մարտկոց Ներկառուցված գերկոնդենսատորի մուտքային հզորություն DC 12V-24V (DC վարդակից (Ø3,5 x Ø1,1)) դեպի լարերը (սև՝ GND / դեղին՝ B+ / Կարմիր՝ ACC) Էլեկտրաէներգիայի սպառման ժամ Նորմալ ռեժիմ (GPS Միացված/Միջ. 480mA/12V Կայանման ռեժիմ (GPS անջատված/2CH)՝ միջին. 370mA/12V * Էլեկտրաէներգիայի իրական սպառումը կարող է տարբեր լինել՝ կախված օգտագործման պայմաններից և շրջակա միջավայրից: Վկայագրեր Front: FCC, ISED, CE, UKCA, RCM, ROHS, TELEC, WEEE, KC REAL: FCC, ISED, CE, UKCA, KC ծրագրաշար կամ ավելի բարձր ուրիշներ հարմարվողական ձեւաչափ-անվճար ֆայլերի կառավարման համակարգ Bluetooth ներկառուցված (v2.1 + EDR / 4.2) LTE արտաքին (պարտադիր) ձայնագրման ժամանակ մոդելի							

			հիշողության հզորություն HR 40 Min High 6 HR 05 Min Normal 8 HR 15 Min 128 GB Extreme (Հ. R 15min ամենաբարձր 29 HR 40 Min 49 HR 15 Min Normal 66 HR 50 MIN BIDRATE (MBPS) առջեւի + հետեւի ծայրահեղություն (H.262) 40 + 10 Ամենաբարձր 25 + 10							
5	32321180/2	Տեսասարքեր-2	Տեսախցիկի պատկերի ցուցիչ 1/3 "Progressive Scan CMOS Starlight Sensor ոսպնյակ MicroSD քարտի սլոտ արեւային վահանակի միացման հզորությունը Արեգակնային վահանակը կարող է միանալ միայն մեկ խցիկի ելքային պորտի տիպի տեսախցիկի համար (ներառված) միկրո USB լիցքավորող նավահանգիստ Ներկառուցված խոսափող եւ խոսնակ աուդիո հաղորդակցման երկկողմանի աուդիո `աղմուկի չեղյալ հայտարարելու համար Siren Volume 94 DB (4 դյույմանոց / 10 սմ հեռավորության վրա) Պահեստավորված անձը (առանձին) Տրանսպորտային միջոցների հայտնաբերման Գործունեության գոտիներ Այո Արդյունքային ծանուցման համակարգի ծանուցման համակարգի ծանուցում SNITSHOT (TAPO CARE SERVICES) ցանցի ցանցի միացում SSL / TLS WI-FI SPALE SECTION 1200 MAM Ներկառուցված լարման Adapter մուտքագրում, 100-240 V, 50/60 Hz (ներառված չէ) Արդյունքային լարման ադապտեր Արդյունք. -20 ℃ 45 ℃ Պահպանման ջերմաստիճանը -20 ℃ ~ 60 ℃ Գործառնական խոնավություն 6.83 × 4.74 × 0.62 in) փաթեթի բովանդակություն TAPO C425 խցիկ × 1 Tapo A201 արեւային վահանակ × 1 տեսախցիկով մետաղալար × 1 Մոնտաժային պտուտակներ × 6 Մարտի լիցքավորել Սկսել ուղեցույցի վկայագրեր CE, FCC, DOE, CEC, RCM, KC, NCC, BSMI, NTRA		50000	150000	3		3	
6	30236180/1	Օպերատիվ հիշողության քարտեր	MicroSDXC հիշողության քարտն ապահովում է բացառիկ բարձր արագություններ տվյալների արագ		70000	350000	5		5	

			փոխանցման, հավելվածների կատարման և 4K UHD տեսանյութի համար: Իդեալական է Android սմարթֆոնների, գործողությունների տեսախցիկների և անօդաչու սարքերի համար՝ այս գերարագ Extreme Pro microSDXC քարտը ձայնագրում է 4K UHD տեսանյութ, աջակցում է Full HD տեսանկարահանումներին և բարձր լուծաչափով լուսանկարներին: Գերարագ SanDisk Extreme PRO microSDXC հիշողության քարտը կարդում է մինչև 200 ՄԲ/վ և գրում մինչև 90 ՄԲ/վ: Բացի այդ, այն ունի A2 արագության դաս, որն ավելի արագ կաշխատի հավելվածները և էլ ավելի հարմար կդարձնի ձեր սմարթֆոնի օգտագործումը: Բնութագրերը Ավելացնել համեմատությանը Հոդված 1897692152 Տիպ Հիշողության քարտ Ծագման երկիր Չինաստան Ապրանքանիշը SanDisk Volume 1 TB Հիշողության քարտի տեսակը microSD, microSDXC Պլատֆորմ Հիշողության քարտի քանոն Extreme PRO Ընթերցանության արագություն, Մբ/վ 200 գրելու արագություն, Մբ/վ 140 U Speed 30, Class 30 apter ներառված Մարմնի նյութ Պլաստիկ Չափսեր, մմ 14,99 մմ x 10,92 մմ x 1,02 մմ Ապրանքի քաշը, գ 1,66 Քանակը փաթեթում, հատ 1 Երաշխիքային ժամկետ Արտադրողի երաշխիք Սարքավորումներ ադապտերով							
7	30232480/1	Տեղեկությունների պահպանման կրիչներ	Տեխնիկական հզորություն 4TB միջերես USB 3.2 Gen 2 Չափերը (L x W x H) 3.97" x 2.07" x 0.38" Համատեղելիություն USB Type-C սարքեր (հեռախոսներ, նոթբուքներ և պլանշետներ) iOS 13+ Android 11+ macOS v.11+ Windows 10+ արագություն գրելով Windows 10+ արագությամբ Դյուրակիր, բարձր հզորությամբ սկավառակը մինչև երեք մետրանոց պաշտպանություն ջրի և փոշու նկատմամբ նշանակում է, որ այս դիմացկուն սկավառակը կարող է ավելի հանգիստ լինել 5 տարվա սահմանափակ երաշխիքով և երկարակյաց սիլիկոնե		150000	300000	2		2	

			պատյանով:							

- *Ապրանքը պետք է լինի չօգտագործված, փաթեթավորմամբ:*
- *Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է մատակարարը՝ իր հաշվին և իր միջոցներով:*
- *Հիմքը՝ ՀՀ կառավարության 07. 03. 2024թ. թիվ 348-Ն որոշում:*
- *Գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և ՀՀ կառավարության 04.05.17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի դ/ պարբերության հիման վրա:*
- *Բոլոր չափաբաժինների մասով սահմանվում է երաշխիքային ժամկետ՝ Պատվիրատուի կողմից ապրանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից 365 օրացուցային օր:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011013902
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղար

Է. Գևորգյան _____
/ստորագրություն/ Կ.Տ/

Digitally signed by GEVORGYAN EDGAR 4010690054
Date: 2025.05.12 09:42:25 AMT

ՎԱՃԱՌՈՂ

«ՀԱՅՏԵՔ» ՍՊԸ
ք.Երևան, Արաբկիր, Երզնկյան 1 13
ՀՎՀՀ 00170201
Հ/Հ 2052222097641001
Ինեկոբանկ ՓԲԸ
Տնօրեն՝

Ա. Պետրոսյան _____
/ստորագրություն/

Digitally signed by PETROSYAN ASHOT 1710690119
Date: 2025.05.08 11:13:07 AMT

Հավելված N 2
« » ---------- 2025թ. կնքված
ՀՀ ՊԵԿ-ՀՄԱԱՊՁԲ-2025/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի*															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2025թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	34721490/1	Անօդաչու թռչող սարք					1500000	1500000	1500000	1500000	1500000	1500000	1500000	1500000	**1500000**
2	31211240/1	Բաշխիչ սարքեր					840000	840000	840000	840000	840000	840000	840000	840000	840000
3	31682140/1	Վերահսկման և ղեկավարման սարքեր					400000	400000	400000	400000	400000	400000	400000	400000	400000
4	32321180/1	Տեսասարքեր-1					840000	840000	840000	840000	840000	840000	840000	840000	840000
5	32321180/2	Տեսասարքեր-2					150000	150000	150000	150000	150000	150000	150000	150000	150000
6	30236180/1	Օպերատիվ հիշողության քարտեր					350000	350000	350000	350000	350000	350000	350000	350000	350000

7	30232480/1	Տեղեկությունների պահպանման կրիչներ					300000	300000	300000	300000	300000	300000	300000	300000	300000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011013902
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղար

Է. Գևորգյան _____
/ստորագրություն/ Կ.Տ/

Digitally signed by GEVORGYAN EDGAR 4010690054
Date: 2025.05.12 09:42:39 AMT

ՎԱՃԱՌՈՂ

«ՀԱՅՏԵՔ» ՍՊԸ
ք.Երևան, Արաբկիր, Երզնկյան 1 13
ՀՎՀՀ 00170201
Հ/Հ 2052222097641001
Ինեկոբանկ ՓԲԸ
Տնօրեն՝

Ա. Պետրոսյան _____
/ստորագրություն/ Կ.Տ/

Digitally signed by PETROSYAN ASHOT 1710690119
Date: 2025.05.08 11:11:24 AMT

Հավելված N 3
« » ---------- 2025թ. կնքված
ՀՀ ՊԵԿ-ՀՄԱՊՁԲ-2025/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » ---------- 2025թ. կնքված
ՀՀ ՊԵԿ-ՀՄԱԱՊՁԲ-2025/1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց **Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____ _____
ազգանուն, անուն ազգանուն, անուն

_____ _____
Ստորագրություն ստորագրություն

Հավելված N 4
« » ---------- 2025թ. կնքված
ՀՀ ՊԵԿ-ՀՄԱԱՊՁԲ-2025/1 ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
գնորդի անվանումը վաճառողի անվանումը

«---ԲՄԱՊՁԲ------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
վաճառողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 8.12 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)
ստորագրությունը

Կ. S. (առկայության դեպքում)

«--» 20 թ.